ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 63
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Լենուղի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Արմավիր համայնքի (Լենուղի բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքը (Լենուղի բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արմավիր-3 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի (Լենուղի բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
04-044-0119-0022 կադաստրային ծածկագրով 0.06 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության (վարելահող և կորիզավոր) հողեր	04-044-0119-0022 կադաստրային ծածկագրով 0.06 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արմավիր համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Արմավիր համայնքի (Լենուղի բնակավայրի) ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի (Լենուղի բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող		
		Դ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 06 » «փետրվարի» 2024 թ.